



Սուսաննա ԱՂԱԶԱՆՅԱՆ

Տնփրեսագիտության թեկնածու

2003 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնփրեսագիտություն» մասնագիտությամբ: 2007 թ. ստացել է տնփրեսագիտության թեկնածուի գիտական աստիճան և աշխատանքի անցել ՀՊՏՀ միջազգային տնփրեսական հարաբերությունների ամբիոնում՝ որպես ասիստենտ: Հեղինակ է 12 գիտական աշխատանքների:

 ORCID - <https://orcid.org/0000-0002-5469-3995>

ՆՈՐ ՏՈՒՐԲՈՒԼԵՆՏՈՒԹՅՈՒՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԿԱՄ ԽՈՒՃԱՊԱՅԻՆ ՊԱՀԱՆՋԱՐԿՆ ԱՊԱԿԱՅՈՒՆԱՑՆՈՒՄ Է ԱՊՐԱՆՔԱԲԱՇԽԻՉ ՑԱՆՑԸ

DOI: 10.52174/2579-2989_2022.2-70

Հիմնաբառեր. դեղամիջոցներ, թանկացում, դեղապահովում, դեղահումք, գներ

Ո՛չ դեղամիջոցները, ո՛չ էլ բժշկական արտադրատեսակները, որոնք ներկրվում են Ռուսաստան, չեն հայտնվել պատժամիջոցների փակ: Որոշ դեղագործական «հսկաներ» հայտարարել են Ռուսաստանի դեղաշուկայում աշխատելու կամ մատակարարումները շարունակելու, միաժամանակ՝ հեղափոխումները սահմանափակելու մասին: Բայց այսօր, ինչպես COVID-19 համավարակի սկզբին, արժարժվում են գրեթե նույն խնդիրները. լոգիստիկ շղթաների խափանում, դեղահումքի, փաթեթավորման նյութերի պակաս, գների փոփոխություն և այլն: Դեղամիջոցները, թեկուզ փարբեր ապրանքային անվանումներով, չեն պակասի դեղափոխերից: Գրեթե այն, ինչ ներմուծվում էր, էլի կներմուծվի, հարցը գնի և գնողունակ պահանջարկի մեջ է: Ռուսաստանի նկատմամբ տնփրեսական պատժամիջոցների կիրառումը, ԱՄՆ դոլարի և եվրոյի փոխարժեքի փոփոխումները կանդրադառնան նաև դեղագործական շուկայի վրա՝ ոչ այնքան դեղերի պակասի, որքան ակնկալվող գնաճի տեսանկյունից: Իսկ այս պայմաններում գների աճը բիզնեսի շարունակականությունը պահպանելու միջոց է:

2020 թ.-ի կորոնավիրուսային համավարակը տնտեսությունում և տարբեր ապրանքային շուկաներում դարձավ փոփոխությունների հիմնական պատճառներից մեկը՝ զգալիորեն բարդացնելով հետագա զարգացումների վերաբերյալ վերլուծություններն ու կանխատեսումները: Համավարակը փորձության ենթարկեց առողջապահական, այդ թվում՝ դեղագործական համակարգի ճկունությունն ու դիմացկունությունը: Ողջ տարվա ընթացքում աշխարհը հետևում էր համա-

վարակի առաջին, երկրորդ, երրորդ փուլերին, պատվաստանյութերի մշակման գործընթացին, բուժման մեթոդներին: Դեղորայքի այս կամ այն խմբի նկատմամբ ժամանակ առ ժամանակ աճող պահանջարկը հանգեցնում էր այդ դեղամիջոցի վաճառքի աճին, երբեմն նաև պակասորդին: Համավարակի ազդեցությունը բազմաբևեռ էր՝ տնտեսական գործընթացներ, սպառողական պահանջարկ, պետական կարգավորում և այլն: Ընդհանուր առմամբ, այդ ժամանակահատվածում բացակայում էին դեղագործական շուկային բնորոշ սեզոնայնությունը և այլ օրինաչափություններ, իսկ հակաբիոտիկների և հակավիրուսային միջոցների պահանջարկը պահպանվեց գրեթե ողջ տարվա ընթացքում:

Համավարակով պայմանավորված տուրբուլենտ ժամանակաշրջանը դեղագործական շուկայի համար ոչ միայն փորձություն էր, այլև դիմացկունություն ձեռք բերելու լրացուցիչ խթան: Արձարձվում էին գրեթե նույն խնդիրները, ինչ այսօր. արժեքի ստեղծման շղթաների խաթարում, լոգիստիկ մատակարարումների կազմակերպման դժվարություններ, հումքի պակաս և այլն: Այս ընթացքում դեղագործական ոլորտը ձեռք բերեց «COVID փորձառություն»՝ զգալիորեն փոփոխելով պատվերները, ապրանքային պաշարների կառավարման մոտեցումները: Այնուամենայնիվ,

չնիվ, չնայած ձեռք բերված փորձառությանը, աշխարհաքաղաքական և տնտեսական նոր իրողության պայմաններում դեղագործական շուկան նորից խոցելի է դառնում՝ հայտնվելով էլ ավելի ուժեղ հարվածների ներքո:

Ինչ ունենք այսօր, և որքանով ենք դեղապահովման առումով կախված Ռուսաստանից:

ՀՀ-ում դեղագործական արդյունաբերությունն ունի փոքր տեսակարար կշիռ՝ հիմնականում կենտրոնացած լինելով միջին և ցածր գնային հատվածներում գտնվող ջեներիկ դեղորայքի արտադրության վրա: Դեղագործական արտադրանքին բաժին է ընկնում մշակող արդյունաբերության շատ փոքր մասը՝ հիմնականում չգերազանցելով 1%-ը:

Ակնհայտ է, որ տեղական արտադրության դեղագործական հումքի տեսակարար կշիռը նույնպես շատ փոքր է: Սա նշանակում է, որ ինչպես աշխարհի գրեթե բոլոր երկրներում, այնպես էլ ՀՀ-ում դեղարտադրողները, դեղագործական հումքի առումով, նույնպես մեծապես կախված են ներմուծումից: Այսօր դեղահումքի համաշխարհային «գործարան» է դարձել Չինաստանը, և պատահական չէ, որ դեղագործական հումքը, մասնավորապես՝ ծծմբօրգանական միացություններ, ամինոմիացություններ, սպիրտներ և այլն, Հա-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Դեղագործական արտադրանքի ծավալն ընթացիկ գներով, 2010-2020 թթ., մլն դրամ¹

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Հիմնային դեղագործական մթերքի արտադրություն (հիմնական դեղանյութերի արտադրություն)	863.2	917.5	1179.5	1214.5	1691.8	1931.2	2227.6	3164.4	2830.2	2884.3	3136.9
Դեղագործական պատրաստուկների և նյութերի արտադրություն (դեղերի արտադրություն (բացի անասնաբուժության համար դեղերի))	2403.9	2615.6	2839.9	4068	4294.7	5703.2	5991	6438	6718	6937.2	8919.6

¹ Կազմել է հեղինակը՝ armstat.am-ի տվյալների հիման վրա:

յաստանը է ներկրում է հիմնականում Չինաստանից, ինչպես նաև Ռուսաստանից, Գերմանիայից, Իրանից, Հնդկաստանից:

Հիմնական դեղագործական արտադրանքի և պատրաստուկների արտադրությունը 2020 թ.-ին կազմել է շուրջ 25 մլն ԱՄՆ դոլար, որից դեղերի արտադրությանը բաժին է ընկել 74%-ը կամ մոտ 18.5 մլն ԱՄՆ դոլար: Ընդհանուր առմամբ, վերջին 10 տարվա ընթացքում դեղագործական արտադրանքի արտադրությունն ավելացել է գրեթե 10 անգամ:

Մեծ է Հայաստանի դեղաշուկայի կախվածությունը ներմուծվող դեղորայքից: Այսպես՝ 2020 թ.-ի ընթացքում ներմուծվել է մոտ 132 մլն ԱՄՆ դոլարի (3004 ապրանքային դիրքում ընդգրկված) դեղամիջոց, ինչը նշանակում է, որ այդ ընթացքում ներմուծված դեղորայքի տեսակարար կշիռը կազմել է մոտ 88%:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա պետք է ասել, որ, սկսած 2009 թ.-ից, վերջինս իրականացնում է «Ֆարմա-2020» ծրագիրը, որի առանցքային ուղղություններից է նաև ներմուծման փոխարինումը: Ըստ այդմ՝ խոշոր վերազգային կորպորացիաներն այստեղ են տեղայնացրել դեղորայքի արտադրությունը՝ և՛ տեխնոլոգիական տրանսֆերի, և՛ արտադրության լրիվ պարբերաշրջանի կազմակերպմամբ: Astra Zeneka, Takeda, Novartis, Gedeon Richter, Teva, Novo Nordics, Sanofi, Eli Lili և մի շարք այլ ընկերություններ դեղորայքի արտադրությունը կազմակերպում են հենց Ռուսաստանում: Թե՛ վերազգային կորպորացիաների դուստր ընկերությունների առկայությունը և թե՛ տեղական դեղարտադրողների մեծ տեսակարար կշիռը հնարավորություն են տալիս, որ երկիրն ունենա բավարար չափով արտադրական հզորություններ: Նրանց կարգախոսն է. «Որքան երկրում բարձր է արտադրության տեղայնացման մակարդակը, այնքան շատ են տրամադրվող արտոնությունները»:

Այստեղ խնդիրն ավելի շատ դեղահումքի ներմուծման գների մեջ է: RNC Pharm-ի հրապարակած զեկույցի համաձայն՝ ռուսական դեղամիջոցների 80-85%-ն ար-

տադրվում է ներմուծված հումքից, որը 2021 թ.-ին Ռուսաստան է ներմուծվել Հնդկաստանից և Չինաստանից (76.7%), ինչպես նաև Եվրամիության երկրներից (19.7%): Ընդհանուր առմամբ, ներմուծվել է շուրջ 15.8 հազար տոննա դեղահումք՝ 195.4 մլրդ ռուբլի արժողությամբ: Իսկ ներմուծումները միշտ կապված են փոխարժեքի հետ, ինչը նշանակում է, որ դեղահումքի գները կարող են աճել 30-35%-ով:

Դեղարտադրողների մոտ արտադրության ինքնարժեքն աճում է ոչ միայն դեղահումքի, այլև օժանդակ նյութերի մասով: Փաթեթավորման համար նախատեսված ստվարաթուղթը Ռուսաստանը ներմուծում է Ֆինլանդիայից, ռուսական «Ռուսալը» բլիստերիզացիայի համար նախատեսված այլումինե փայլաթիթեղի գինն ամրագրում է ԱՄՆ դոլարով: Եթե սրան հավելենք բեռնափոխադրումների արժեքը, լոգիստիկայի խնդիրները և ծախսերը, ապա ստեղծված տնտեսական իրավիճակում գնաճն անխուսափելի է:

Ռուսաստանում այս պահին դեղորայքի որոշ խմբերի պակասը պայմանավորված է ոչ թե դեղամիջոցների կամ դեղահումքի ներմուծման արգելքով, այլ խուճապային պահանջարկով, ինչի վառ ապացույցն է այն, որ միջին գնումն ավելացել է 5 անգամ:

Ինչպես վերը նշեցինք, Հայաստանի դեղագործական շուկան մեծապես կախված է հատկապես Ռուսաստանից՝ պայմանավորված վերջին տարիների զուգահեռ ներմուծման գործընթացի ակտիվացմամբ: Այսպես՝ 2020 թ.-ին Ռուսաստանից Հայաստան է ներմուծվել մոտ 18.1 մլն ԱՄՆ դոլարի դեղորայք, և 2015 թ.-ի համեմատ այս ցուցանիշն ավելացել է գրեթե 5 անգամ: Ընդ որում, ցուցանիշն աճել է նաև ծավալային արտահայտությամբ, և եթե 2015 թ.-ին ներմուծվել է մոտ 90 տոննա դեղամիջոց, ապա 2020 թ.-ին՝ 1460 տոննա: Ընդհանուր առմամբ, 2016-2020 թթ.-ի ընթացքում Ռուսաստանից դեղորայքի ներմուծումը միջինում ավելացել է 30%-ով: 2020 թ.-ի արժեքային արտահայտությամբ Ռուսաստանին բաժին է ընկել ներմուծվող

Դեղամիջոցների գները 2019-2022 թթ. (ընտրանքային)

	Դիաբերոն ՄՌ	Նոշպա	Բերդիպրիլ 20	Սմեկրա	Ազոդիս 20	Աուգմենտին 625
2019	3670	2055	1620	1618	2760	2120
2022	2500	1870	1400	1153	2012	1775
Գնանկում	46.8%	9.8%	15.7%	40.3%	27.1%	19.4%

դեղորայքի մոտ 14%-ը, մինչդեռ Գերմանիային՝ 15.3%-ը, այնուամենայնիվ, ծավալային արտահայտությամբ, ներմուծման գրեթե կեսը բաժին է ընկել Ռուսաստանին: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ եթե Գերմանիայից ներմուծվող դեղորայքի 1 տոննայի արժեքը միջինում կազմել է մոտ 122 հազար ԱՄՆ դոլար, ապա Ռուսաստանի դեպքում այս ցուցանիշը գրեթե 10 անգամ փոքր է՝ 12 հազար ԱՄՆ դոլար: Հարկ է նշել, որ ցածր արժեքներ ունեն նաև Բելառուսից և Ուկրաինայից ներմուծվող դեղամիջոցները:

2020 թ.-ին արտահանված 10.72 մլն ԱՄՆ դոլարի դեղորայքի 42.9%-ը (3004 ապրանքային դիրք) ուղղվել է դեպի Ռուսաստան, որին հաջորդել են Վրաստանը, Ուզբեկստանը, Մոլդովան: Արտահանված դեղորայքի 2.8%-ն ուղղվել է դեպի Ուկրաինա:


Զուգահեռ ներմուծման արգելքի վերացումը և համապատասխանաբար՝ զուգահեռ ներմուծվող դեղորայքի ծավալների ընդլայնումը, ինչպես նաև ռուսաստանյան դեղարտադրողների հետ պայմանագրերի կնքումը բավական մեծացրել են Հայաստանի կախվածությունը ռուսական դեղաշուկայից: Այսպես՝ եթե «Servier» ընկերության արտադրանքը նախկինում ներմուծվում էր միայն Ֆրանսիայից, այժմ դրա մի մասը ներմուծվում է Ռուսաստանից, քանի որ ընկերությունը 2007 թ.-ին իրականացրել է արտադրական տեխնոլոգիաների տրանսֆեր դեպի Ռուսաստան: Արդյունքում, շուկայում արձանագրվել է որոշակի գնանկում մի շարք ապրանքատեսակների գծով (օրինակ՝ «Պրեստարիում 5» դեղամիջոցը, որը ներկրվում էր

Ֆրանսիայից, արժեք 2097 դրամ, իսկ Ռուսաստանից ներկրվածը՝ 1900 դրամ՝ մոտ 10%-ով էժան):

Սստեղծված նոր իրողության պայմաններում ՀՀ-ում դեռևս ոչ բոլոր դեղամիջոցներն են թանկացել, բայց նման գործընթաց արդեն սկսվել է, և ներմուծող ընկերությունները ներկայում վերանայում են գները: Դեղաշուկայում որոշ ներմուծվող դեղամիջոցների (Alcon, GMP, Olainpharm), մանկական կերերի (Heinz, Hipp) գծով արձանագրվում է գների աճ՝ միջինում 5-12%-ով, միաժամանակ, տեղական արտադրողները չեն փոփոխել մատակարարվող դեղորայքի գները, քանի որ դեռևս ունեն հումքի որոշակի պաշարներ: Ըստ էության, եթե փոխարժեքը չկայունանա, ապա կարծում ենք՝ գների հետագա բարձրացումն անխուսափելի կլինի: ՀՀ-ում դեղորայքի խուճապային գնումներ հիմնականում արձանագրվել են մի քանի ապրանքատեսակների, մասնավորապես՝ Լ-Թիրոքսինի, Էութիրոքսի, Կոլխիցինի (պատճառը հիմնավորվում է դեպի Ռուսաստան ուղարկելով) և ուկրաինական մի քանի դեղամիջոցների, հատկապես՝ Կարբամազեպինի մասով: Նշենք, որ վերջինս արտադրվում է նաև Հայաստանում՝ «Արփիմեդ» դեղագործական ընկերությունում:

Ռուսաստանի Դաշնության կառավարության 2022 թ. մարտի 9-ի «Նախագահի 2022 թ. մարտի 8-ի N100 հրամանագրի կատարման միջոցառումների մասին» N311 որոշմամբ սահմանվել են ապրանքների խմբեր, որոնց նկատմամբ կիրառվելու է արտահանման թույլատրման ընթացակարգ: Այս խմբի ներքո հայտնվել են ավելի քան 200 անուն ապրանքատեսակներ, այդ թվում՝ բժշկական կետ-

¹ Կազմել է հեղինակը՝ armstat.am-ի տվյալների հիման վրա:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1



Ռուսաստանի թույլատրման ընթացակարգով արտահանվող ապրանքախմբեր (ընտրանքային)²

գուտը, վիրաբուժության և ատամնաբուժության մեջ կիրառվող գործիքներ և սարքեր, մանրադիտակներ, ոսպնյակներ, մերսման սարքեր, օզոնի, թթվածնային և աերոզոլային թերապիայի ու շնչառական սարքավորումներ: Բացի դրանից, ցանկում տեղ են գտել օրթոպեդիկ սարքեր, այդ թվում՝ հենակներ, վիրաբուժական գոտիներ և վիրակապեր, կոտրվածքների բուժման այլ միջոցներ, մարմնի արհեստական մասեր, լսողական սարքեր, ինչպես նաև այլ սարքավորումներ: Հարակից արտադրանքից սահմանափակման տակ է հայտնվել դեղագործական և լաբորատոր նպատակների համար նախատեսված ապակյա ամանեղենը: Ուսումնասիրել ենք նշված մի քանի ապրանքատեսակների՝ ՀՀ ներմուծման աշխարհագրությունը, որոնք հիմնականում չեն ներմուծվում Ռուսաստանից (գծապատկեր 1)³: Հարկ է նշել, որ սահմանափակումները չեն տարածվի այն ապրանքների վրա, որոնք արտադրվում են Ռուսաստանում և ուղեկցվում CT-1 ծագման վկայականով, ինչպես նաև արտահանվում ԵԱՏՄ անդամ երկրներ:

Այսպես՝ վիրաբուժական կետգուտները Հայաստան են ներմուծվում հիմնականում ԱՄՆ-ից, Գերմանիայից, Իսպանիայից,

Բելգիայից: Ատամնաբուժության մեջ կիրառվող ատամի ցեմենտի և ատամալցման նյութերի մեծ մասը ներկրվում է Գերմանիայից, Շվեյցարիայից, Կորեայից և Ճապոնիայից:

Ապակյա տարաների մասով Հայաստանը 2020 թ.-ին ներկրել է մոտ 421 հազար ԱՄՆ դոլարի արտադրանք, որի 24%-ը բաժին է ընկել Չինաստանին, իսկ 22.3%-ը՝ Ռուսաստանին: Ապրանքատեսակների ներմուծման ժամանակավոր սահմանափակումը կանդրադառնա ապակյա տարաների վրա: Բայց պետք է ասել, որ վերջին տարիներին այս ապրանքատեսակը ակտիվորեն ներմուծվում է նաև Կոստա Ռիկայից և Իրանից:

Հատկանշական է, որ ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսության կայունացման նպատակով մշակվել են մի շարք միջոցառումներ՝ միտված Եվրասիական միասնական տարածքի ներքին շուկայի ամրապնդմանը: Այս համատեքստում որոշվել է նվազեցնել ներմուծման մաքսատուրքերը և կիրառել սակագնային արտոնություններ մոտ 450 ապրանքի, մասնավորապես՝ պարենամթերքի, դեղորայքի, մետալուրգիական և շինարարական հումքի ներմուծման համար: Կնվազեն մանկական կերերի, դեղամիջոցների արտադ-

² Постановление Правительства РФ № 390 от 17.03.2022.

³ Կազմել է հեղինակը Постановление Правительства РФ № 390 от 17.03.2022 և trademark.org-ի տվյալների հիման վրա:

րության համար ներմուծվող հումքի մաքսատուրքերը (5-10%), ինչի արդյունքում, վերջնական սպառողի համար գները կիջնեն⁴: Արտաքին սահմանափակումների պայմաններում անհրաժեշտ դեղապոհովում իրականացնելու նպատակով պարզեցվել են նաև բժշկական պարագաների գրանցման կանոնները:

Ընդհանուր առմամբ, Ռուսաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցները դեռևս հայաստանյան շուկայում չեն հանգեցրել դեղորայքի պակասի, քանի որ համապատասխան պաշարներ կան մեծածախ պահեստներում, դեղատներում: Հիմնական խնդիրն այն է, որ եթե այսօր տեղական դիստրիբյուտորական ցանցերը վաճառեն իրենց դեղորայքի պաշարները, ապա վաղը նույն գներով չեն կարողանալու իրականացնել ներմուծում: Ար-

տադրողները նույնպես ներմուծված հումքի պաշարների նոր խմբաքանակի ձեռքբերման դեպքում կբախվեն գների փոփոխության: Փոխարժեքի տատանումների այս համապատկերում դեղերի գնաճն անխուսափելի է: Իհարկե, այսօր դժվար է տալ ամփոփ գնահատականներ, քանի որ իրավիճակն անընդհատ փոփոխվում է:

Այս առումով, կարևոր է, որ տեղական ընկերությունները վերանայնեն իրենց միջազգային գործընկերության հնարավորությունները՝ ընդլայնելով դրա շրջանակները, ռազմավարական դեղապահովման տեսանկյունից՝ զարկ տան տեղական արտադրությանը, ինչպես նաև հնարավորություն ընձեռեն վերազգային կորպորացիաներին՝ տեղայնացնելու իրենց արտադրությունը:

⁴ https://eec.eaeunion.org/news/speech/soviet-eek-obnuli-importnye-poshliny-na-bolee-chem-450-tovarov/?sphrase_id=86573

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Информационный ресурс Государственной программы «Развитие фармацевтической и медицинской промышленности» на 2013-2020 годы.
2. Постановление Правительства РФ № 390 от 17.03.2022
3. Статистический ежегодник Евразийского Экономического Союза. ЕЭК, М., 2020.
4. https://eec.eaeunion.org/news/speech/soviet-eek-obnuli-importnye-poshliny-na-bolee-chem-450-tovarov/?sphrase_id=86573
5. <https://trademap.org>
6. <https://armstat.am>

Сусанна АГАДЖАՆՅԱՆ

Кандидат экономических наук, АГЭУ

НОВАЯ ТУРБУЛЕНТНОСТЬ НА ФАРМАЦЕВТИЧЕСКОМ РЫНКЕ, ИЛИ ПАНИЧЕСКИЙ СПРОС ДЕСТАБИЛИЗИРУЕТ РАСПРЕДЕЛИТЕЛЬНУЮ СЕТЬ

Ни лекарства, ни медицинские изделия, ввозимые в Россию, под санкции не попали. Некоторые фармацевтические «гиганты» заявили, что будут работать на российском фармрынке или продолжат поставки, но ограничат дальнейшие инвестиции. Но сегодня, как и в начале пандемии COVID-19, говорят почти о тех же проблемах: нарушение логистических цепочек, нехватка сырья, упаковочных материалов, изменение цен и т. д. В аптеках недостатка в лекарствах, под разными торговыми марками, не будет. Вопрос в ценах на лекарства и в покупательской способности населения. Введение экономических санкций в отношении России, колебания курса валют также повлияет на фармацевтический рынок не столько дефицитом лекарств, сколько ожидаемым повышением цен. В тоже время в этих условиях рост цен — это способ сохранить непрерывность бизнеса.

Ключевые слова: *лекарства, рост цен, поставки лекарств, сырье, цены*

Susanna AGHAJANYAN
PhD in Economics, ASUE

NEW TURBULENCE IN PHARMACEUTICAL MARKET OR PANIC DEMAND DESTABILIZES THE DISTRIBUTION NETWORK

The spread of coronavirus is a serious problem for health systems both in the world and in Armenia. There are many problems: equipment, hospital beds, protective equipment, personnel, etc. The paper analyzes the global health safety index and the place of Armenia in this rating. The indicators of public spending in the health care system, the volume of population spending on health services, as well as the country's provision of hospital beds, and drug provision were also studied. The paper revealed that despite having good ratings, many countries did not cope with the pandemic, and it would be necessary to “treat” the economies and the health systems.

Keywords: *medicines, price increase, medicine supply, raw materials, prices*